ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի ողջույնի խոսքը ՀՀ վնասվածքաբանների և օրթոպեդների միջազգային մասնակցությամբ 7-րդ համագումարի բացման կապակցությամբ (Երևան, 2018 թ. հոկտեմբերի 25-27)

Համագումարի հարգելի մասնակիցներ,

Ուրախ եմ ձեզ ողջունել Հայաստանի վնասվածքաբանների և օրթոպեդների միջազգային մասնակցությամբ 7-րդ համագումարի մեկնարկի կապակցությամբ:

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն խիստ կարևորում է այս ոլորտի նշանակությունը և պետական բյուջեի սահմաններում իր աջակցությունն է ցուցաբերել համագումարի անցկացման աշխատանքներին:

Հայաստանում նման թեմայով համագումարներ կազմակերպվում են 1993 թ.-ից, երբ ավերիչ երկրաշարժն ու պատերազմն իրենց անշրջելի հետքն էին թողել բնակչության շրջանում, և այդ ոլորտում երկիրը, առաջին հերթին, լուրջ մասնագետների կարիք ուներ:

Այդ տարիներին Հայաստանում խիստ կարևորվում էր հենաշարժական համակարգի ախտահարումների ախտորոշման և բուժման նորագույն մեթոդների կիրառումը:

Եվ ողջունելի է, որ ոլորտի առաջատար կազմակերպությունները՝ Հայաստանի վնասվածքաբանների և օրթոպեդների ասոցիացիան և Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոնը, հանձն առան նման նախաձեռնության:

Նման համագումարները հնարավորություն են տալիս հանրությանը ծանոթացնել հենաշարժական համակարգի ախտահարումների ախտորոշման և բուժման նորագույն ձեռքբերումներին, կլինիկական գործունեության և ուսուցման մեջ դրանց ներդրումներին:

Ընդհանրապես, նմանատիպ միջոցառումները միտված են նաև մասնագիտական բազմապրոֆիլ հարթակ ստեղծելուն: Դրանք հնարավորություն են տալիս ոլորտի գիտաշխատողներին և մասնագետներին ներկայացնել իրենց կողմից իրականացվող և կիրառական հետաքրքրություն ունեցող հետազոտությունների արդյունքները, պետական կառույցների ներկայացուցիչներին ներկայացնել իրենց գործունեությանն առնչվող խնդիրները:

Աջակցելով համագումարի կազմակերպմանը՝ մեր խնդիրն է նաև նպաստել Հայաստանի և ԱՊՀ երկրների և արտասահմանցի մասնագետների ջանքերի միավորմանը, տարբեր երկրների առաջատար մասնագետների և կլինիկաների համագործակցության ամրապնդմանը:

Մենք կարևորում ենք այս գիտաժողովը նաև նրանով, որ այն պետք է խթան հանդիսանա երիտասարդ մասնագետների համար՝ հետաքրքրություն առաջացնելով գիտական հետազոտությունների նկատմամբ և հնարավորություն տալով նրանց ծանոթանալ ոլորտի նորամուծություններին: Ակնկալվում է, որ գիտաժողովի արդյունքում անցկացվող աշխատանքները հնարավորություն կընձեռնեն քննարկել և մշակել նոր մոտեցումներ, ինչպես նաև՝ համագործակցության արդյունքում կլուծվեն մեծ թվով հետազոտական խնդիրներ:

Հարգելի մասնակիցներ,

Մեկ անգամ ևս ողջունում եմ բոլորիս համագումարի բացման կապակցությամբ և մաղթում արդյունավետ և հաճելի աշխատանքային օրեր:

Սամվել Հարությունյան